

46 Եւ այնպէս յամենայն կողմանս Զայոց եւ Վրաց եւ Աղուանից, զամենայն աւուրս կենաց իւրոց, զամառն եւ զձմեռն զտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ, իւրով իսկ աւետարանական եւ ողջունատիպ գնացիւք առաջի թագաւորաց եւ իշխանաց, եւ ամենայն հեթանոսաց եւ անընդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին զանունն Յիսուսի կրեաց: 47 Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ եւ հոգեղեն վառեաց, եւ բազում բանդականաց եւ կալականաց եւ տագնապելոց փրկութիւն արարեալ՝ կորզելով զնոսա ահաւորութեամբ զաւրութեամբ փառացն Զրիստոսի: 48 Եւ բազում մուրհակս արիւնագիրս անիրաւութեանն պատառեաց, եւ բազում սգաւորաց եւ կարճամտելոց՝ միսիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն եւ փրկչին մերոյ Յիսուսի Զրիստոսի նուաճեաց, եւ զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդ փոխեաց:

49 Եւ դարձեալ բազում գունդս գունդս վանականաց, ի շէնս եւ յանշէնս, դաշտական լեռնականս, անձաւամուտս եւ արգելականս բնակեցուցեալ հաստատեր: 50 Չորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբ արինակ ցուցեալ, առեալ զոմանս զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանաց, եւ երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթ եղեալ զառաւրեայ զկենցաղս խոտաբուտ ճաշակաւքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տուեալ, մանաւանդ որոց հայեցեալ ի միսիթարութիւն առաքեալական բանիցն, թէ՛ *Յորժամ վասն Զրիստոսի տկարանամ, զաւրացեալ լինիմա՞:*

51 Անդ էր ապա չարբենալ գինով, այլ առաւել հոգւով, եւ պատրաստել զսիրտս երգով հոգեւորավք, ի փառս եւ ի գովութիւն: 52 Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: 53 Անդ քաջալերութիւն յորդորական լուսաւոր վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսադիր կիտին: 54 Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: 55 Անդ աղաւթք աղերսալիք, պաղատանք փարելիք, եւ ինդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասերն Աստուած: 56 Եւ նովին հոգեկրան արուեստիւ հաներ աւուրս բազումս յանապատ տեղիսն, մինչեւ ազդ լինել յերիցանց՝ իրացն ինչ հոգեւորաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհաւքն Աստուծոյն: 57 Եւ անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցաներ:

58 Եւ զայս առներ զամենայն ժամանակս իւր, վասն անձին եւ վասն աշխարհի, քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինու-